ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« » ..... 20 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ 2010-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը և Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 1476-Ն որոշմամբ հաստատված 2018 թվականի միջոցառումների կատարումն ապահովելու նպատակով.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող 2018 թվականի միջոցառումների ցանկը (այսուհետ՝ ցանկ)՝ համաձայն հավելվածի:

2. Նախարարի տեղակալներին՝ ապահովել ցանկում ներառված միջոցառումների իրականացումը:

3. Նախարարության աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներին՝ ցանկում ներառված միջոցառումների կատարման ընթացքի մասին մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 7-ը Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2011 թվականի հունվարի 31-ի N 10-Ա հրամանով հաստատված կարգին և հաշվետվության

ձևին համապատասխան նախարարության աշխատակազմի գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչություն ներկայացնել հաշվետվություն:

4. Նախարարության աշխատակազմի գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչությանը՝ ամփոփել սույն հրամանի 3-րդ կետով նախատեսված՝ աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներից ստացված հաշվետվությունները և մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 15-ն ամփոփ հաշվետվությունը սահմանված ընթացակարգով ներկայացնել հաստատման:

5. Սույն հրամանի 3-րդ և 4-րդ կետերի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել նախարարության աշխատակազմի ղեկավարին:

6. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին:

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ի. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

Հավելված

ՀՀ գյուղատնտեսության նախարարի
2018թ. հունվարի -ի N ..... հրամանի

ՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող 2018 թվականի միջոցառումների

	Միջոցառման անվանումը	Նպատակը/ խնդիրը	Իրականացնողները				Ժամկետը	Ծանոթություն
			Համակարգողներ (նախարարի տեղակալ, աշխատակազմի ղեկավար)	Պատասխանատու ստորաբաժանումներ, կազմակերպություններ	Ստորաբաժանումների, կազմակերպությունների ղեկավարներ	Համակատարող պետական կառավարման այլ մարմիններ		
1 (1)	Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման և գործունեության խթանում	Հանրապետությունում գյուղատնտեսական տարբեր ուղղվածություն ունեցող կոոպերատիվների ձևավորման խթանում և գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծում	Ռ. Մակարյան Ռ. Մակարյան	Գյուղատնտեսական կոոպերացիային աջակցության բաժին Գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչություն Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ	Մ. Խաչատրյան Հ. Ծպնեցյան Գ. Գևորգյան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն ՀՀ մարզպետարաններ	2018թ. ընթացքում	
2 (5)	Գյուղական բնակավայրերում ոչ գյուղատնտեսական գործունեության ծավալմանը, փոքր ու միջին ձեռնարկատիրությանն աջակցության, գյուղական բնակչության ոչ գյուղատնտեսական	Գյուղական բնակավայրերի աշխատուժի, հումքային ռեսուրսների արդյունավետ օգտագործում, բնակչության եկամուտների ավելացում, աղքատության մակարդակի	Ռ. Մակարյան	Ագրովերամշակման զարգացման վարչություն Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ	Գ. Ղազարյան Գ. Գևորգյան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն ՀՀ մարզպետարաններ	2018թ. ընթացքում	

	Միջոցառման անվանումը	Նպատակը/ խնդիրը	Իրականացնողները				Ժամկետը	Ծանոթություն
			Համակարգողներ (նախարարի տեղակալ, աշխատակազմի ղեկավար)	Պատասխանատու ստորաբաժանումներ, կազմակերպություններ	Ստորաբաժանումների, կազմակերպությունների ղեկավարներ	Համակատարող պետական կառավարման այլ մարմիններ		
	զբաղվածության ապահովման նպատակով աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագիտական ուսուցման ծրագրերի իրականացում	կրճատում, հողի շուկայի կայացման համար պայմանների ստեղծում						
3 (6)	Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական ռիսկերի գնահատման ծրագրի և ապահովագրության փորձնական ծրագրի իրականացում	Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման համար նախադրյալների ձևավորում	Ար. Հարությունյան Ռ. Մակարյան Աշ. Հարությունյան Աշ. Հարությունյան Ա. Կիրակոսյան	Գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչություն Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն Անասնաբուծության և անասնաբուժության վարչություն Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն	Հ. Ծպնեցյան Ռ. Նազարյան Լ. Տեր-Իսահակյան Կ. Ավետիսյան	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	2018թ. ընթացքում	
4 (7)	Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման ծրագրի իրականացում	Գյուղատնտեսության ոլորտում տնտեսավարողների գործունեության կայունության ապահովում և ընդ-	Ար. Հարությունյան Ռ. Մակարյան	Գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչություն	Հ. Ծպնեցյան	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ տնտեսական զարգացման և	2018թ. ընթացքում	

	Միջոցառման անվանումը	Նպատակը/ խնդիրը	Իրականացնողները				Ժամկետը	Ծանոթություն
			Համակարգողներ (նախարարի տեղակալ, աշխատակազմի ղեկավար)	Պատասխանատու ստորաբաժանումներ, կազմակերպություններ	Ստորաբաժանումների, կազմակերպությունների ղեկավարներ	Համակատարող պետական կառավարման այլ մարմիններ		
		լայնված վերարտադրության համար հնարավորությունների ապահովում	Աշ. Հարությունյան Աշ. Հարությունյան Ա. Կիրակոսյան	Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն Անասնաբուծության և անասնաբուժության վարչություն Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն	Ռ. Նազարյան Լ. Տեր-Իսահակյան Կ. Ավետիսյան	ներդրումների նախարարություն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)		
5 (9)	Հանրապետությունում փոքրածավալ սպանդանոցների հիմնադրման և գործունեությանն աջակցություն	Գյուղատնտեսական կենդանիների սպանդի պայմանների բարելավում: Սննդի անվտանգության պահանջներին համապատասխան իրացվող մսամթերքի որակի ապահովում և հիվանդությունների բացառում	Աշ. Հարությունյան Աշ. Հարությունյան	Անասնաբուծության և անասնաբուժության վարչություն Սննդամթերքի անվտանգության բաժին	Լ. Տեր-Իսահակյան Ա. Շիրվանյան	ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ մարզպետարաններ	2018թ. ընթացքում	
6 (16)	Տոհմաբուծության զարգացման ծրագրի իրականացում	Գյուղատնտեսական կենդանիների տոհմային հատկանիշների պահպանում, նոր բարձր մթերատու ցեղերի բուծում	Աշ. Հարությունյան	Անասնաբուծության և անասնաբուժության վարչություն	Լ. Տեր-Իսահակյան	ՀՀ մարզպետարաններ	2018թ. ընթացքում	

	Միջոցառման անվանումը	Նպատակը/ խնդիրը	Իրականացնողները				Ժամկետը	Ծանոթություն
			Համակարգողներ (նախարարի տեղակալ, աշխատակազմի ղեկավար)	Պատասխանատու ստորաբաժանումներ, կազմակերպություններ	Ստորաբաժանումների, կազմակերպությունների ղեկավարներ	Համակատարող պետական կառավարման այլ մարմիններ		
7 (17)	Գյուղատնտեսական կենդանիների տոհմային հատկանիշների բարելավման տարեկան և երկարաժամկետ ծրագրերի իրականացում	Արտերկրից բարձր տոհմային հատկանիշներ ունեցող գյուղատնտեսական կենդանիների ներմուծման միջոցով անասնագլխաքանակի հոտի կառուցվածքի բարելավում, մթերատվության բարձրացում	Աշ. Հարությունյան	Անասնաբուծության և անասնաբուժության վարչություն	Լ. Տեր-Իսահակյան	ՀՀ մարզպետարաններ	2018թ. ընթացքում	
8 (18)	Սերմերի որակի ստուգման և պետական սորտափորձարկման միջոցառումների իրականացում	Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային ցածր որակ ունեցող սերմերի և տնկանյութի օգտագործման ծավալների նվազեցում: Կոնդիցիոն սերմերի վերարտադրության ապահովում	Աշ. Հարությունյան	Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ	Ռ. Նազարյան Վ. Մանուկյան		2018թ. ընթացքում	
9 (19)	Տնկարանային տնտեսությունների զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացում	Բարձր որակի և բարձրարժեք սորտերի խաղողի և պտղատու տնկիների արտադրություն: Նոր հիմնվող այգիների մաքրասորտ, լիարժեք, բարձր բերքատվության հասցնելիության ուղղությամբ խորհրդատվության ապահովում	Աշ. Հարությունյան	Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն	Ռ. Նազարյան		2018թ. ընթացքում	

	Միջոցառման անվանումը	Նպատակը/ խնդիրը	Իրականացնողները				Ժամկետը	Ծանոթություն
			Համակարգողներ (նախարարի տեղակալ, աշխատակազմի ղեկավար)	Պատասխանատու ստորաբաժանումներ, կազմակերպություններ	Ստորաբաժանումների, կազմակերպությունների ղեկավարներ	Համակատարող պետական կառավարման այլ մարմիններ		
10 (20)	Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման ծրագրի իրականացում	Գյուղատնտեսական հողերի գիտականորեն հիմնավորված պարարտացման համակարգերի մշակում	Աշ. Հարությունյան	Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն «Ագրոքիմիական ծառայություն» ՊՈԱԿ	Ռ. Նազարյան Վ. Դավթյան		2018թ. ընթացքում	
11 (22)	Օրգանական գյուղատնտեսության խթանման ծրագրի իրականացում	Հանրապետության գյուղատնտեսության ներուժի առավել արդյունավետ օգտագործում, արտադրության արդյունավետության բարձրացում	Աշ. Հարությունյան Աշ. Հարությունյան Ռ. Մակարյան Աշ. Հարությունյան	Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն Անասնաբուծության և անասնաբուժության վարչություն Ագրովերամշակման զարգացման վարչություն Սննդամթերքի անվտանգության բաժին	Ռ. Նազարյան Լ. Տեր-Իսահակյան Գ. Ղազարյան Ա. Շիրվանյան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	2018թ. ընթացքում	
12 (23)	Գյուղատնտեսական մշակաբույսերի բուսասանիտարական մոնիթորինգի ծրագրի իրականացում	Գյուղատնտեսական մշակաբույսերի բուսասանիտարական վիճակի մոնիթորինգ, բույսերի վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների մշակում, բույսերի պաշտպանության	Աշ. Հարությունյան Աշ. Հարությունյան	«Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն	Ն. Բարսեղյան Ռ. Նազարյան		2018թ. ընթացքում	

	Միջոցառման անվանումը	Նպատակը/ խնդիրը	Իրականացնողները				Ժամկետը	Ծանոթություն
			Համակարգողներ (նախարարի տեղակալ, աշխատակազմի ղեկավար)	Պատասխանատու ստորաբաժանումներ, կազմակերպություններ	Ստորաբաժանումների, կազմակերպությունների ղեկավարներ	Համակատարող պետական կառավարման այլ մարմիններ		
		միջոցառումների անցկացում						
13 (24)	Բույսերի պաշտպանության միջոցառումների ծրագրի իրականացում	Առավել տարածված և վտանգավոր օրգանիզմների դեմ բույսերի պաշտպանության կենտրոնացված միջոցառումների իրականացում	Աշ. Հարությունյան Աշ. Հարությունյան	Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ	Ռ. Նազարյան Ն. Բարսեղյան		2018թ. ընթացքում	
14 (25)	Բույսերի կարանտինի ծրագրի իրականացում	Հանրապետության տարածքում բուսասանիտարական անվտանգության ապահովում	Աշ. Հարությունյան Աշ. Հարությունյան	Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ	Ռ. Նազարյան Ն. Բարսեղյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն **(առաջին կատարող)**	2018թ. ընթացքում	
15 (26)	Գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման միջոցառումների իրականացում	Կովերի արհեստական սերմնավորման համար անհրաժեշտ սերմնահեղուկի բազայի ստեղծում	Աշ. Հարությունյան	Անասնաբուծության և անասնաբուժության վարչություն	Լ. Տեր-Իսահակյան		2018թ. ընթացքում	«CARD» ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն **(առաջին կատարող)** Մասնավոր հատված
16 (27)	Գյուղատնտեսական կենդանիների համարակալ-	Հանրապետությունում տոհմային գործի	Աշ. Հարությունյան	Անասնաբուծության և անասնաբուժու-	Լ. Տեր-Իսահակյան	ՀՀ գյուղատնտեսության նախարա-	2018թ. ընթացքում	

	Միջոցառման անվանումը	Նպատակը/ խնդիրը	Իրականացնողները				Ժամկետը	Ծանոթություն
			Համակարգողներ (նախարարի տեղակալ, աշխատակազմի ղեկավար)	Պատասխանատու ստորաբաժանումներ, կազմակերպություններ	Ստորաբաժանումների, կազմակերպությունների ղեկավարներ	Համակատարող պետական կառավարման այլ մարմիններ		
	ման և հաշվառման միջոցառումների ծրագրի իրականացում	բարելավում, անասնաբուժական միջոցառումների արդյունավետության բարձրացում, անասունների գրավադրման համար նախապայմանների ստեղծում		թյան վարչություն		ության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն **(առաջին կատարող)**		
17 (28)	Անասնահակահամաճարակային միջոցառումների գնահատման ծրագրի իրականացում	Կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելում, կենդանիների և մարդու համար ընդհանուր հիվանդություններից ազգաբնակչության պաշտպանություն, հանրապետությունում հակահամաճարակային կայուն իրավիճակի ստեղծում, հակահամաճարակային կանխարգելիչ միջոցառումների արդյունքների մոնիթորինգ և համապատասխան առաջարկությունների նախապատրաստում	Աշ. Հարությունյան	Անասնաբուծության և անասնաբուժության վարչություն «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ	Լ. Տեր-Իսահակյան Ն. Բարսեղյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն **(առաջին կատարող)** ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	2018թ. ընթացքում	
18(29)	Կանխարգելիչ պատվաստումների ծրագրի իրականացում համայնքային անասնաբույժների մասնակցությամբ	Հակահամաճարակային պատվաստումների և ախտորոշիչ հետազոտությունների միջոցով հանրապե-	Աշ. Հարությունյան	Անասնաբուծության և անասնաբուժության վարչություն «Անասնաբուժասա-	Լ. Տեր-Իսահակյան Ն. Բարսեղյան		2018թ. ընթացքում	

	Միջոցառման անվանումը	Նպատակը/ խնդիրը	Իրականացնողները				Ժամկետը	Ծանոթություն
			Համակարգողներ (նախարարի տեղակալ, աշխատակազմի ղեկավար)	Պատասխանատու ստորաբաժանումներ, կազմակերպություններ	Ստորաբաժանումների, կազմակերպությունների ղեկավարներ	Համակատարող պետական կառավարման այլ մարմիններ		
		տության տարածքում կենդանիների վարակիչ հիվանդությունների նկատմամբ կայուն հակահամաճարակային վիճակի ստեղծում		նիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ				
19 (31)	Բնական կերահանդակների (արոտների) մոնիթորինգի, բարելավման և ջրարբիացման միջոցառումների ծրագրի իրականացում	Բնական կերահանդակների օգտագործման համակարգում, դրանց ջրարբիացման համակարգերի վերականգնում	Աշ. Հարությունյան	Հողերի օգտագործման և մելիորացիայի վարչություն Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ	Ա. Բաղդասարյան Գ. Գևորգյան		2018թ. ընթացքում	Համաշխարհային բանկի վարկային ծրագրի միջոցներ
20 (32)	Կլիմայի փոփոխության հետևանքով գյուղատնտեսության խոցելիության նվազեցման միջոցառումների իրականացում	Կլիմայի փոփոխության նկատմամբ գյուղատնտեսության ճյուղի կայունության ավելացում	Աշ. Հարությունյան	Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն	Ռ. Նազարյան	ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ մարզպետարաններ	2018թ. ընթացքում	
21 (33)	Գյուղատնտեսական հողերի և հատկապես, արոտավայրերի դեգրադացիայի (վատթարացման) և անապատացման դեմ պայքարի միջոցառումների իրականացում	Գյուղատնտեսական հողերի վիճակի վատթարացման կանխում և բարելավում	 Աշ. Հարությունյան	Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ Հողերի օգտագործման և մելիորացիայի վարչություն	Գ. Գևորգյան Ա. Բաղդասարյան	ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ մարզպետարաններ	2018թ. ընթացքում	Համաշխարհային բանկի վարկային ծրագրի միջոցներ
22 (34)	Ջրախնայողական նորարարական տեխնոլոգիաների ներմուծման և զարգացման ծրագրերի իրականացում	Ոռոգման ջրի խնայողաբար օգտագործում	Աշ. Հարությունյան	Հողերի օգտագործման և մելիորացիայի վարչություն Գյուղատնտեսության	Ա. Բաղդասարյան Գ. Գևորգյան	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն **(առաջին կատա-**	2018թ. ընթացքում	

	Միջոցառման անվանումը	Նպատակը/ խնդիրը	Իրականացնողները				Ժամկետը	Ծանոթություն
			Համակարգողներ (նախարարի տեղակալ, աշխատակազմի ղեկավար)	Պատասխանատու ստորաբաժանումներ, կազմակերպություններ	Ստորաբաժանումների, կազմակերպությունների ղեկավարներ	Համակատարող պետական կառավարման այլ մարմիններ		
				զարգացման հիմնադրամ		**ող),** ՀՀ մարզպետարաններ		
23 (40)	Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագրի նախապատրաստում և իրականացում (վարկային ծրագիր)	Գյուղական համայնքներում առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործման ու կառավարման միջոցով անասնապահության ճյուղի արդյունավետության ու մրցունակության բարձրացում, անասնապահական մթերքների արտադրության ծավալների ավելացում	Ռ. Մակարյան	Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ	Գ. Գևորգյան	ՀՀ մարզպետարաններ	2018թ. ընթացքում	Համաշխարհային բանկի վարկային ծրագրի միջոցներ
24 (42)	Գյուղատնտեսության սուբսիդավորման ուղղությունների և մեխանիզմների մշակում, կատարելագործում և ծրագրերի իրականացում	Առևտրի համաշխարհային կազմակերպությանն անդամակցության շրջանակներում ստանձնած պարտավորությունների կատարման և գյուղատնտեսությունում տնտեսավարող սուբյեկտների համար բարենպաստ պայմանների ձևավորման նախադրյալների ստեղծում	Ռ. Մակարյան Աշ. Հարությունյան Աշ. Հարությունյան Ռ. Մակարյան	Գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչություն Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն Հողերի օգտագործման և մելիորացիայի վարչություն Ագրովերամշակման զարգացման վարչություն	Հ. Ծպնեցյան Ռ. Նազարյան Ա. Բաղդասարյան Գ. Ղազարյան	ՀՀ ֆինանսների նախարարություն	2018թ. ընթացքում	